թյուն. թեև իսկությամբ այդպիսին չէ։ Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչությունն իսկապես շատ սպասելիս գործ է կատարել՝ գլուխ բերելով այդ աշխատության հրատարակությունը, թեև, ինչպես հեղինակն է գանգատվում մեկ ուղղված գրավոր գրության մեջ, տպագրության ընթացքում տեղի են ունեցել բազմաթիվ վրիպումներ։ Այսպես սրինակ՝ «136-րդ էջի առաջին սյունակում թ՚ինկյիս գերբայի տակ 21 անգամ տպված է թ՚ինի, բայց պիտի լինի առաջին ձևով՝ թ՚ինի՚խս։ Նման վրիպակներով լիքն է գիրքը։ Ճիշտ է՝ բարբառագիտական աշխատության մեջ վրիպակներից հնարավոր չէ բոլորովին խուսափել, բայց պետք է սրբագրությունը շատ ուշադիր կատարվեր, որովհետև վրիպակները այդպիսի դեպքում դառնում են անբարեխիղճ գրախոսողի գրչի տակ ծառեր մեղադրանք հեղինակի հասցեին, թյուրիմացության մեջ գցում հետազոտողին։

Առանձին առարկություն չունենալով հեղինակի փաստերին և եզրակացություններին՝ ցանկանում ենք պարզաբանել նրա մի դիտողությունը։ Հեղինակը 148 էջում գրում է. «...գուցե իմաստ ունենա «ում» հյուղը վերանվանել «մս հյուղ, ինչպես «սա (աս, էս, իս վերջավորություններից)։ է (նշ. ալ-ից)»։

Այսպիսի քայլ կատարելը ոչ միայն իմաստ չունի, այլև գիտականորեն սխալ կլիներ, որովհետև դերբայական վերջավորության «մ» հընչյունին նախորդող «ա», «ու», «ա», «ի», «ը» (ամ, ամ, ում, ամ, իմ, ըմ) հնչյունները այլահնչյունները են՝ առաջացած ազդումից, քմայնացումից կամ ներդաշնակությունից, մինչդեռ ես, աս, իս, էլ, ալ դերբայական վերջավորությունների նախորդող ձայնավորները հնչաձևություններ են և ցույց են տալիս բայերի խոնարհման կարգը։ Քանի որ «ես», «աս», «ի» խոնարհումների անկատար դերբայը ունենում է միևնույն «ա» կամ «լ» վերջավորությունը, ուստի այդ հատկանիշն առնում ենք իբրև հյուղային հատկանիշ («սա» հյուղ, «լ» հյուղ), որպեսզի չանենք ես-աս-իս հյուղ, կամ էլ-ալ հյուղ։

Իսկ «ում» վերջավորության անկատար դերբայում ոչ մի խոնարհում չի երևում և «ում» վերջավորությունը ամ, ամ, իմ, ըմ, ում հնչյունափոխված ձևերի լրիվն է և երանով էլ ճանաչում ենք բարբառախումբը։

Գործը իսկապես մեծ է, անհարեթաց. հեղինակը ստեղծել է մի աշխատություն, որ անմահացնում է Ղարաբաղի մարզի հայկական բարբառները։

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. ՂԱՐԻԲՅԱՆ

Ն. ԹՈՎՄԱՍՅԱՆ, Գրիգոր Տաթևացու սոցիալ-տնտեսագիտական հայացքները, «Միտք» հրատարակչություն, Երևան, 1966, 153 էջ, գին 75 կոպ.։

Այս արժեքավոր գործի առաջին գլուխը (էջ 3—27) պարունակում է Գրիգոր Տաթևացու գործունեության ժամանակաշրջանի պատմատնտեսական ակնարկը, երկրորդ գլխում (էջ 27—85) շարադրված են մեծ մտածողի սոցիոլոգիական հայացքները, իսկ երրորդ գլխում (էջ 85—145) կատարված է նրա սոցիալ-տնտեսագիտական հայացքների խոր վերլուծումն ու տրված գիտական գնահատումը։ Գիրքն ավարտվում է Տաթևացու գիտական գործունեության բնութագրումը ներկայացնող համառոտ եզրակացություններով (էջ 145—153)։

Գրիգոր Տաթևացին (1346—1409) ապրել ու գործել է թաթար-մոնղոլական տիրապետության շրջանում։ Այդ դաժան օրերին հայ ժողովրդի գոյության պահպանման հուսալի զենքն էին նրա հոգևոր ու նյութական դարավոր մշակույթի պահպանումն ու զարգացումը, որի կենսագործման բնագավառում նշանակալից դեր կատարեցին Դլաձորի և Տաթևի համալսարանները, որոնց ղեկավարներ Ներսես Մշեցին, Եսայի Նչեցին, Հոմհան Որոտնեցին և Գրիգոր Տաթևացին նոանգուն գործունեությամբ զարգացման նոր աստիճանի բարձրացրին ճշգրիտ ու հասարակական գիտությունները ու պատրաստեցին շատ գիտնականներ, մանկավարժներ և մշակույթի տարբեր բնագավառների աշխատողներ։

Բացառիկ է Գրիգոր Տաթևացու դերը՝ որպես մանկավարժ-դաստիարակի և գիտնական-մտածողի։ Մեծ ու բազմաբովանդակ է նրա գրական ժառանգությունը փիլիսոփայության, տնտեսագիտության, իրավունքի և այլ գիտությունների բնագավառներում։ Ն. Թովմասյանի դոկտորական գրքույկի «Պատմատնտեսական ակնարկ» գլխի արժանիքը ոչ միայն նրանում է, որ ցույց է տալիս Տաթևացու գործունեության գիտական շարադրանքը, այլև հատկապես նրանում, որ տալիս է Հայաստանի տնտեսական վիճակն ու զարգացումը Ռագրատունիների խաղաղասիրական քաղաքականության մեկ և կես դար տևող ժամանակաշրջանում։ Իր գիտական հարցադրումները նա հիմնավորում է Ստեփանոս Օրբելյանի, Սմբատ սպարապետի, Մխիթար Գո-

շի, Թովմա Արծրունու, Կիրակոս Գանձակեցու, Ներսես Շնորհալու և Գրիգոր Տաթևացու աշխատություններից արված մեջբերումներով։

Հայաստանում զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանի պատմական իրադրությունները, դասակարգային փոխհարաբերությունները և տնտեսական հարաբերությունները բնութագրող այս հաջողված գլխի թերությունն է նրա սեղմ, սխեմատիկ բնույթը։ Մեր կարծիքով XIII—XIV դարերի ֆեոդալական էկոնոմիկայի վերլուծմանը արժեր անդրադառնալ ավելի ծավալուն ու հանգամանորեն։

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում համառոտակի շարադրված են Տաթևացու փիլիսոփայական հայացքները, իսկ երկրորդ ենթագլխում վերլուծման են ենթարկված ու գնահատված նրա սոցիալական հայացքները։ Նախօրոք պետք է նշել, որ սոցիալական հայացքները տնտեսագիտական ուսմունքից անջատ շարադրելը շատ մեծ պայմանականության վրա է հիմնված և իրեն չի արդարացնում։ Ավելի ճիշտ կլիներ սոցիալ-տնտեսագիտական հայացքները մեկ գլխում շարադրելը, որով կապահովվեին մատուցվող նյութի ամբողջականությունն ու տրամաբանական միասնությունը, և չէին լինի շարադրանքի այդ եղանակից բխող կրկնությունները։ Ակնհայտ է, որ բառիս լայն իմաստով տնտեսագիտական ուսմունքը սոցիալական հայացքների էական մասն է կազմում։

Իրավացի է Ն. Թովմասյանը, երբ հատուկ ուշադրություն է դարձնում սոցիալական երևույթների փիլիսոփայական իմաստավորման վրա և Տաթևացու փիլիսոփայական հայացքները վերլուծում է հենց այդ տեսանկյունով։ Տաթևացին եղել է աստվածաբան մտածող, և նրա փիլիսոփայությունը իր էությամբ իդեալիստական է։ Սակայն Տաթևացին հավատին հատկացնում է աստվածաբանության բնագավառը, իսկ գիտությանը՝ բնական երևույթներն ու հասարակական կյանքը, որոնք մտքի ու բանականության գործունեության ասպարեզ են։ Ունենալով այս ելակետը՝ գիտնական Տաթևացին հաճախ դուրս է գալիս աստվածաբանի դոգմատիկ շրջանակներից, և մենք ականատես ենք դառնում մեծ մտածողի մտքի մատերիալիստական փայլատակումներին։ Այսպես, օրինակ, Տաթևացին նշում է, որ մարդը զինված է արտաքին երևույթները ընկալելու զգայարաններով և ստացված տվյալները վերլուծելու ու հետևություններ անելու բանականությամբ։ Գիտությունը, շարունակում է նա, իմաստավորում է հասարակական կյանքը և մարդկանց գործունեությունը դարձնում է արդյունավետ։ Իմաստության տեսակները քննարկելիս Տաթևացին ընդգծում է տեսության և գործնականի սերտ կապի կարևորությունը հասարակության զարգացման համար։ Իր «Գիրք հարցմանց» աշխատության մեջ Տաթևացին մարդու հասարակական ու անձնական տնտեսությունը համարում է տնտեսական ու քաղաքական գիտության հետազոտման առարկան։ Մարդը իր գործունեությամբ ապահովում է նաև մարդկանց վերարտադրությունը և գոյամիջոցների ստեղծումը։ Հետաքրքիր է նաև, որ Տաթևացին գիտության գործը համարում է երևույթից դեպի էություն ընթանալը, որը բացահայտվում է միայն իմացության միջոցով և ապա այն, որ նա ճշմարտության չափանիշը վերջին հաշվով համարում է իրական կյանքը՝ «ճշմարտութիւն իր է և էութիւն և ստութիւն ոչ ինչ և անիր»[1]։ Սակայն Տաթևացու վերոհիշյալ հետաքրքիր գիտական մտքերը ճմլվում են աստվածաբանական-փիլիսոփայական սիստեմի ճիրաններում և մնում են որպես մեծ մտքի չհամակարգված փայլատակումներ, որը հետևանք էր ժամանակաշրջանի ու հեղինակի աշխարհայացքի դասակարգային սահմանափակվածության։ Իրավացի է Թովմասյանը իր հետևյալ եզրակացությունում. «Հանրահայտ է, որ ինչպես միջին դարերի առաջավոր մտածողներից շատերը, այնպես էլ Տաթևացին, լինելով քրիստոնեական եկեղեցու հայրերից մեկը, իր կրոնական քարոզներով կամենում էր հիմնավորել քրիստոնեական աստվածաբանությունը, որով և պայմանավորված են այն անհետողականությունն ու հակասությունները, որ բնորոշ են նրա փիլիսոփայությանը» (էջ 27)։

«Սոցիալական հայացքները» ենթագլխում գրքի հեղինակը ամենից առաջ բացահայտում է Տաթևացու հայացքները ֆեոդալիզմի դասակարգային կառուցվածքի և աշխարհիկ ու հոգևոր հիերարխիայի մասին։ Տաթևացին, որպես ֆեոդալական ազնվականության գաղափարախոս, ջատագովում է ֆեոդալական շահագործումը և հատկապես հոգևոր իշխանությունը։ Նա աշխատում է տեսականորեն հիմնավորել իշխողների ու ժողովրդի ներդաշնակ լինելը, ելակետ ունենալով ֆեոդալական իշխանության աստվածային բնույթից բխող այն սկզբունքը, որ իշխանները ազգի գլուխն են, ժողովուրդը՝ մարմինը, որ գլուխը մտքի օրգանն է, մարմինը՝ զգայությունների, իսկ դրանք փոխադարձաբար անհրաժեշտ են միմյանց։ Տաթևացին խոսում է հարստության և աղքատության ծայրաթևերի մասին և ցույց է տալիս, որ ազնվականության հարստությունը ստեղծվում է ՀՈՐ-

1 Գր. Տաթևացի. Գիրք քարոզութեան. սմառան հատոր, էջ 27։

տերի աշխատանքով։ Նա դատապարտում է ինչպես առևտրականների խարեությունները, այնպես էլ իշխանավորների կաշառակերությունը, որով օրինականացվում են կողոպուտները։ Տաքնացին մերժում է ծայրահեղ հարբստությունն ու անչափ աղքատությունը, և նրա աշխատություններում քիչ չեն սոցիալական շարիքների մերկացման փաստերը։ Այսպես, օրինակ, «Գիրք քարոզութեան» մեջ նկարագրելով ֆեոդալական բաղաքը, նա այն համարում է ապականված՝ փողոցներից ու հրապարակներից սկսած մինչև աստվածային տաճարն ու թագավորական արքունիքը, բայց նման վիճակը համարելով մասնակի երևույթ, գտնում է, որ հասարակությունը կարելի է մաքրել աղտեղություններից։ Նույն աշխատությունում օգտագործվող ժողովրդական առակում թագավորները բնորոշվում են որպես ձրիակեր ու անպտուղ փուշ, իսկ աշխատավորների արտադրական աշխատանքը՝ բարձր գնահատվելով, դիտվում է որպես նյութական բարիքների առատության աղբյուր։ Տաքնացին գտնում է, որ շարիքները առաջանում են հարստության կուտակման այլանդակ ձգտումից և, չբմբռնելով այդ կուտակման սոցիալ-տնտեսական հիմքերը, այն համարում է մարդու ագահության հետևանք։ Նրա աշխատություններում քիչ չեն տեղերը, ուր նա դեպի աշխատավորությունը ցուցաբերում է բարյացակամ ու սրտացավ վերաբերմունք։ Նկարագրելով աղքատի կյանքը որպես կարիքի, զրկանքների ու անհաջողությունների անընդհատ շղթա, նա նշում է, որ ընչազուրկը մերժված է բոլորից, որովհետև կյանքում գնահատվում են ոչ թե մարդու արժանիքները, այլ հարստությունը, մարդիկ ընկճվում են ու խոնարհվում հարստության առաջ։ Անդրադառնալով չարի ու բարու փոխհարաբերության և շարիքների պատճառների ուսումնասիրության հարցին, Տաքնացին իր՝ հիմնականում իդեալիստական ուսմունքում առանձին դեպքերում արտահայտում է հարցի գիտական լուսաբանության տեսակետից արժեքավոր ռացիոնալ մտքեր։ Այսպես, օրինակ, չարիքների առաջացումը նա կապում է մարդկանց գործունեության հետ և նրանց պատճառները փնտրում է հասարակության մեջ, որից հետևում է, որ չարիքը ոչ թե կրոնա-բարոյական արստրակցիա է, այլ ունի կոնկրետ հասարակական բովանդակություն և հանցագործությունները իրական կյանքին ներհատուկ հակասությունների ծնունդ են։ Սակայն գիտնականը տեղի է տալիս շահագործողների գաղափարախոսի առջև և առաջ է բերում հակադիր տենդենցների ներդաշնակություն քաղաքական իշխանության արենսդիր ու գործադիր մարմինների կողմից ապահովելու դրությունը, ըստ որում նա չի բացառում նաև օրենքների դասակարգային բովանդակությունը։ Իրավացի է Թովմասյանը, երբ Տաքնացու աշխատությունների խոր գիտական վերլուծման հիման վրա հանգում է այն եզրակացության, որ Տաքնացին, երկրի նորմալ զարգացման պայմանը համարելով միասնական ֆեոդալական թագավորությունը, սահմանադրական միապետությունը՝ որպես կառավարման ամենառացիոնալ ձև, հակադրում է բացարձակ միապետությանը։

Այս գլխի վերջում հեղինակը շարադրում և ճիշտ գիտական դիրքերից գնահատում է Տաքնացու պայքարը աղանդավորական շարժումների դեմ։

Գրախոսվող աշխատության ամենահետաքրքիր և կարևոր մասը «Գրիգոր Տաքնացու տնտեսագիտական ուսմունքը» խորագիրը կրող երրորդ գլուխն է, որը մոտավորապես դրքի կեսն է կազմում։

Այս գլխի առաջին ենթագլխում բացահայտվում է Տաքնացու ուսմունքը ապրանքի և աշխատանքի մասին։ Տաքնացին տեսնում է կյանքում արդեն նշանակալից զարգացման հասած ապրանքային հարաբերությունները։ Ընդգծելով ապրանքների կարևորությունը որպես սպառարժեքներ, նա մարդկանց պահանջմունքները իրենց բնույթով երկու տեսակի է բաժանում՝ մարմնական և հոգեկան։ Մարմնական պահանջմունքները բավարարելու համար մարդիկ կազմակերպում են նյութական բարիքների արտադրությունը, իսկ հոգևորի բավարարման համար ստեղծում են կրոն ու գիտություն։ Ապրանքներն էլ, մարդկանց պահանջմունքներին համապատասխան, Տաքնացին բաժանում է երկու մեծ խմբի՝ նյութական բարիքներ և հոգևոր բարիքներ։ Նյութական բարիքներն էլ բաժանելով երկու մասի՝ առաջին անհրաժեշտության պահանջմունքները բավարարող բարիքներ և վայելչության պահանջմունքների բավարարման միջոցներ կամ դարդարանք, նա վերջինս նույնացնում է արծաթ ու ոսկի կուտակելու անհագուրդ տենչի հետ և դատապարտում է արծաթամոլությունը, չբմբռնելով, սակայն, նրա էությունն ու պատճառները։

Տաքնացին արծաթի մեջ տեսնում է նաև ապրանքներ ձեռք բերելու կամ փոխանակարժեք հատկություններ, բայց իրականության պասսիվ ընկալումից այն կողմ չի անցնում և ի վիճակի էլ չէր բացահայտելու փողի առաջացման գաղտնիքը։ Նա մարդու սպառողական «կարողությունը» (պահանջմունքը — Վ. Ա.) համարում է հասարակության առաջընթացի զսպանակը, արդյունագործության և գյուղատնտեսության կազմակերպման դրդապատճառը։

Տաքևացին, դիտելով աշխատանքը որպես սպառողական արժեքների արտադրության պրոցես, այն համարում է մարդու բնածին հատկություններ և գոյության միջոցների ստեղծման պայմաններ։ Նա տարբերում է երկու տեսակի աշխատանք՝ ֆիզիկական և մտավոր. ֆիզիկական աշխատանքով ստեղծվում են նյութական լարիքներ, իսկ մտավոր աշխատանքի արդյունքները բավարարում են հոգևոր պահանջմունքները։ Տաքևացին դիտականորեն չի բացատրում սպառարժեքի և արժեքի տարբերությունը, որովհետև նա ինչպես աշխատանքի, այնպես էլ արդյունքների ելակետը համարում է մարդկանց սպառողական պահանջմունքները։ Իրավացիորեն քննելով ստեղծագործական աշխատանքի Տաքևացու բնորոշումը, ըստ որի մարդը կենդանական աշխարհից տարբերվում է հենց ստեղծագործական աշխատանքով, Թովմասյանն ընդգծում է հայ ականավոր մտածողի կողմից նշված մարդկային աշխատանքի հետևյալ ուշագրավ առանձնահատկությունները։ Նախ և առաջ Տաքևացին մրջյունի բնազդական գործունեությանը հակադրում է մարդու նախապես մտածված ու գիտակցված գործունեությունը՝ մկանների, նյարդերի և ուղեղի ուժերի ծախսումը բնությունն իր կարիքներին հարմարեցնելու նպատակով։ Տաքևացին որոշակիորեն ընդգծում է, որ մարդը նախ պատրաստում է իրի մտավոր կաղապարը և ապա ֆիզիկական առարկան։ Մարդը, ասում է նա, իր աշխատանքի արդյունքով բավարարում է նաև հոգևոր պահանջմունքները։

Այնուհետև Տաքևացին նշում է, որ մարդը բնության վրա ներգործում է ոչ միայն իր բնական օրգաններով, այլ նաև աշխատանքի գործիքներով, հետևաբար արտադրությունը հատուկ է միայն ակտիվ ներգործող սուբյեկտին՝ մարդուն, որով նա դառնում է բնության տերը։ Մարդու աշխատանքը ունի հասարակական բնույթ, որովհետև իր բազմակողմանի պահանջմունքները («կարոտությունը») բավարարող արտադրություն մեկ մարդը իր սահմանափակ ունակություններով անկարող է կազմակերպել. բացի այդ, մարդիկ արտադրության պրոցեսում մտնում են աշխատանքային որոշակի հարաբերությունների մեջ, որը չի կարող լինել կենդանական աշխարհում։ Մարդու աշխատանքի մեջ Տաքևացին տեսնում է նաև բարոյական և սոցիալական տարբեր. ըստ նրա աշխատանքը ոչ միայն գոյության պահպանման միջոց է, այլև կենսական անհրաժեշտություն, օրգանիզմի նորմալ զարգացման և ստեղծագործական ուժերի ծաղկման պրոցես։ Ուսումն ու դաստիարակությունը կապելով աշխատանքային գործունեության հետ, նա աշխատանքը համարում է մարդու ֆիզիկական ու մտավոր կարողությունների վերարտադրության դարբնոց։

Տաքևացին անաշխատ եկամուտներով ապրողներին նմանեցնում է բոռերին։ Նա ընդգծում է նաև ֆեոդալիզմի համար բնորոշ՝ աշխատանքի հարկադրական բնույթը, որը լինում է երկու ձևով՝ անձնական կախման վրա խարսխված ճորտային աշխատանք և տնտեսական հարկադրանքով կատարվող վարձու աշխատանք։

Տաքևացին, տեսնելով XIV դարում կալվածատիրական տնտեսություններում զգալի չափով գործադրվող վարձու աշխատանքը, նշում է աշխատողների ու տերերի միջև հակասության ու պայքարի սրումը հատկապես վարձատրության շուրջը։ Նա հասկանում է, որ հարկադրական աշխատանքում վարձու աշխատողները խոչընդոտվում են ու նահատակվում, շահագրգռված չեն արտադրության ու հարստության աճման գործում։ Այդ դրությունից դուրս գալու միջոցներից մեկը նա համարում է վաստակի արդարացի հատուցման սկզբունքը, ըստ որի աշխատավորին պետք է վճարել այնպես, որ հնարավոր դառնա շատ թե քիչ տանելի ապրուստը։ Հեղինակը ցույց է տալիս, որ հասարակական աշխատանքի բովանդակության բացահայտումը Տաքևացու աշխատություններում հսկայական գիտական հետաքրքրություն է ներկայացնում։

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում շարադրվում ու տնտեսագիտորեն վերլուծվում են Տաքևացու հայացքները արժեքի, գնի և շահույթի վերաբերյալ։ Տաքևացին ապրանքների փոխանակության մեջ տեսնում է ոչ միայն ապրանքների չափակցման, այլև հասարակական տարբեր խմբերի տնտեսական գործունեության համեմատման պրոցեսը։ Համոզված լինելով, որ աշխարհը ստեղծված է բարության ու արդարության սկզբունքներով, նա «չափեր ու կշիռներ», «արժեք», «գին» և «նին ըստ հասարակաց» չափամիավորները համարում է խարեբայություններից զերծ, փոխադարձ օգնության ու շահավետության հարաբերությունների միջոց։ Նա ընդգծում է, որ ծանրության, ծավալի և երկարության չափերը ստեղծված են արդարացի փոխանակության համար։ Տաքևացին չի բացատրում և չէր էլ կարող բնութագրել գնի հիմքը, բայց նա պահանջում է, որ վաճառքի գինը արժեքից բարձր կամ ցածր չլինի։ Այսպիսով, XIV դարի հայ մտածողը ընկալում է գնի և արժեքի կապը, բայց հասկանալի պատճառով անկարող է տալ նրանց փոխկապակցությունների գիտական հիմնավորումն ու բացատրությունը։ Այսպես, օրինակ, նա նշում է, որ ապրանքը բարձր գին պետք է ունենա, եթե

պատրաստված է թանկարժեք հումքից, մերժում է պահանջարկի՝ առաջարկից գերազանցելու հետևանքով գնի բարձրացումը, որովհետև այդ դեպքում գինը գերազանցում է «հասարակական նիհից» (արժեքից—Վ. Ա.)։ Ըստ Տաթևացու «նիհն ըստ հասարակաց երկրի» հասկացությունը տարբերվում է ապրանքի անհատական արժեքից. այն իր բովանդակությամբ նույնական է հասարակական արժեքի հետ և հանդիսանում է շուկայական գների հիմքը։ Իհարկե, իրավացի է Թովմասյանը, երբ ընդգծում է, որ Տաթևացին չէր կարող մշակել արժեքի աշխատանքային տեսությունը, բայց նա զարգացած ֆեոդալիզմի պայմաններում, երբ ձևավորվում էր ներքին շուկան և ծավալվում արտաքին առևտուրը, գնի և արժեքի մասին արել է հնարավոր գիտական կռահումները։ Մարդկանց տնտեսական և առևտրական գործունեության բովանդակությունը շահույթի կամ ավելցուկի ձևոք բերումը համարելով, Տաթևացին շահույթի երեք աղբյուրներ է նշում՝ գյուղատնտեսությունը, արդյունագործությունը և առևտուրը։ Նա նկատել է, որ կապիտալի շարժման իմաստը ավանսավորված դրամագլխի աճն է։ Հայ ականավոր գիտնականը ընդգծում է, որ արդյունագործության մեջ հարստության աղբյուրն աշխատանքն է, իսկ գյուղատնտեսության մեջ աշխատանքն ու բնությունը։ Նա դատապարտում է առևտրի ոլորտում ոչ համարժեք փոխանակության հետևանքով ստացվող շահույթը և այն համարում է բազմաթիվ հասարակական չարիքների պատճառ։ Այս հիման վրա էլ նա իր աշխատություններում բազմագան փաստերով բնութագրում է առևտրա-վաշխառուական կապիտալի թալանչիական, քայքայիչ գործունեությունը։ Գրախոսվող գրքի հեղինակը հենց Տաթևացու աշխատություններից արվող մեջբերումներով ու նրանց գիտական ճիշտ մեկնաբանումներ տալով, ընթերցողի ուշադրությունը բևեռում է արժեքի, գնի ու շահույթի կատեգորիաների վերաբերյալ Տաթևացու գիտական լուրջ արժեք ներկայացնող դրույթների վրա։

Այս գրքի երրորդ գլխի երրորդ ենթագլխում վերլուծվում են Տաթևացու դրույթները աշխատանքի հասարակական բաժանման և արտադրության ճյուղերի դասակարգման մասին։ Աշխատանքի բաժանումը, ըստ Տաթևացու, հետևանք է մարդու պահանջների բազմազանության և անհատի կարողությունների սահմանափակության, այն նյութական բարիքների արտադրության կազմակերպման համար անհրաժեշտություն է և իրականացվում է տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց համագործակցության միջոցով։ Այսպիսով, լուծվում է հակասությունը մարդու պահանջների և դրանք բավարարելու նրա սահմանափակ հնարավորությունների միջև։ Տաթևացին մերժում է մարդու տեղը հասարակական համագործակցության սիստեմում բնածին գաղափարներով որոշելու, ինչպես նաև մարդկանց բնական անհավասարության Պլատոնի տեսությունը։ Հասարակության դասակարգային կառուցվածքի հավերժականության Պլատոնի տեսությանը նա հակադրում է մարդկանց բնական հավասարության դրույթը։

Ընդգծելով, որ հարստության աղբյուրը կարող են լինել սեփական աշխատանքն ու վաստակը, հափշտակության ու «զրկողության» (շահագործման—Ա. Ա.) միջոցով հարստության կուտակումը Տաթևացին համարում է աստծո սահմանած կարգին հակասող և մարդու շար կամքից բխող անարդարություն։ Նա ուղղակի հայտարարում է, որ շահագործման միջոցով հարստանալը պատահականություն է, իսկ սեփական վաստակով հարստանալը՝ աստծո կողմից տրված պարգև։ Ջնայած այդ հետաքրքիր և իր ժամանակի համար առաջադիմական մտքերին, Տաթևացին դասակարգերի դերն ու փոխհարաբերությունները քննարկում է աստվածաբանական դոգմաների հիման վրա, քարոզում է դասակարգային շահերի ներդաշնակության ըմբռնումը և վերջին հաշվով հավերժացնում է ֆեոդալական դասակարգային կառուցվածքը։

Տաթևացին հասարակության նյութական բարիքների մեծ մասի աղբյուր, այդ բարիքների արտադրության առաջատար ճյուղը համարում է գյուղատնտեսությունը, բայց նա ճիշտ է ընկալում երկրագործությունից արհեստների անջատման պրոցեսը և չի անտեսել արհեստագործության դերը նյութական բարիքների ստեղծման գործում։ Նա գյուղատնտեսական բնատնտեսության առավելությունն է համարում այն, որ դա բազմաճյուղ արտադրություն է, արտադրում է ինչպես պարենամթերքներ, այնպես էլ արհեստագործական արդյունքներ և միաժամանակ վաճառում է արտադրական ավելցուկը։ Տաթևացին մարդկանց զբաղմունքի վատթարագույն ճյուղը համարում է վաշխառությունը, որովհետև վաշխառուն նկամուտ է ստանում «բռնությամբ և զրկելով», սակայն նա չի ըմբռնել տոկոսի բնույթն ու էությունը։ Նա լավ հասկացել ու հարուստ փաստերով բնութագրել է վաշխառուական կապիտալի քայքայիչ դերը։ Ելնելով արհեստների դերի և նրանց՝ արդար վաստակի աղբյուր լինելու իր դրույթից, նա ծնողների և հասարակության պարտականությունն է համարում երեխաներին արհեստ սովորեցնելը։ Առևտրի անհրաժեշտությունը նա բխում է աշխատանքի հասարակական բաժանումից, ըստ ո-

րում Տաթևացին սպառողական արժեքների փոխանակություն կատարող առևտուրը համարում է օգտակար և անհրաժեշտ, իսկ շրջանառության միջոցով դրամագլուխը աճեցնելու ու հարստություն կուտակելու նպատակով կատարվող առևտուրը համարում է չարիք։ Այսպիսով, Տաթևացին հասարակական արտադրության ճյուղերի դասակարգման հիմքում դնելով նյութական բարիքների ստեղծման սկզբունքը, օգտակար է համարում գյուղատնտեսությունը, արդյունագործությունը և առևտուրը, իսկ վաշխառությունը՝ վնասակար։ Նրա մոտ մենք տեսնում ենք արտադրողական և ոչ արտադրողական աշխատանքի մասին ուշագրավ դատողություններ, որոնցից ամենակարևորը այն է, որ արտադրողական աշխատանքի բնագավառներ է համարում միայն գյուղատնտեսությունն ու արդյունագործությունը։

Գրքում կան որոշ վիճելի տեղեր և լեզվական անհարթություններ. այսպես, օրինակ, Թովմասյանը գրում է. «Տաթևացին փաստորեն ցույց է տալիս, որ ֆեոդալական արիստոկրատիայի հարստությունը ստեղծվում է ճորտերի աղքատությունից և ընդհակառակը» (էջ 52)։ Նախ և առաջ շահագործողների հարստության աղբյուրը ոչ թե շահագործվողների աղքատությունն է, այլ արտադրողական աշխատանքը։ Այնուհետև, «ընդհակառակը» բառը տվյալ տեքստում նշանակում է, որ ճորտերի աղքատությունը ստեղծվում է արիստոկրատիայի հարստությունից, որ, իհարկե, իմաստազուրկ է։ Ավելի ճիշտ կլիներ ասել, որ Տաթևացին ընկալել է այն իրական վիճակը, որ աշխատավորները որքան շատ հարստություն են ստեղծում ազնվականության համար, այնքան ավելի են տառապում աղքատության ճիրաններում։ Վիճելի է նաև 123-րդ էջում հեղինակի փորձը բնատնտեսության ավելցուկի և բուն ապրանքային տնտեսության վաճառքի գործարքների տարբերության ընդգծման վերաբերյալ։ Նախ, եթե խոսքը վաճառքի գործարքներին է վերաբերում, ապա բոլոր դեպքերում էլ մենք գործ ունենք արտադրողների փոխանակային հարաբերությունների հետ։ «Բուն ապրանքային տնտեսություն» դարձվածքն էլ անորոշ է, որովհետև կան նրա տարատեսակները։ Ինչպես երևում է, հետազոտողն ի նկատի ունի արդեն ձևավորված ապրանքային արտադրությունը, որը պարզ ապրանքային տնտեսությունն է (գյուղացու և արհեստավորի), բայց այդ դեպքում տարբեր հասարակական հարաբերություններ փնտրելն ավելորդ է, որովհետև XIV դարում ապրանքադրամական հարաբերությունները արդեն ծավալվել էին, և տեղի էր ունենում բնատնտեսության քայքայման ու ապրանքային գործառնության զարգացման պրոցեսը։ Տաթևացին այդ բնապատմական պրոցեսի գիտական բացատրությունը տալ չէր կարող։

Գրքի թերություններից է նաև նրա տեղ-տեղ սխեմատիկ բնույթը, որ պատճառ է դարձել այնքանի, որ բարձրացված որոշ կարևոր հարցեր տնտեսագիտական վերլուծման չեն ենթարկվել և, հասկանալի լինելով մասնագետների համար, դժվար ըմբռնելի են միջին ընթերցողների համար։

Չնայած նշված թերություններին, միջնադարի հայ ականավոր գիտնականի մասին ընթերցողը ստացել է շատ արժեքավոր գործ։ Իրավացի է Ն. Թովմասյանը, երբ իր համառոտ եզրակացությունների վերջին պարբերությունում նշում է, որ Տաթևացին մեծ է սոցիալ-տնտեսական երևույթների ընդգրկման ծավալի և վերլուծության խորության տեսակետից։

Վ. ԱՂՈՒԶՈՒՄՅԱՆ

АРИСТОВА Т. Ф. *Курды Закавказья*. М., 1966, 212 стр., цена 85 коп.

Как известно, помимо Советского Союза, где по Всесоюзной переписи населения 1959 г. насчитывается 59 тыс. курдов, курдский народ в своем подавляющем большинстве населяет страны Ближнего Востока: Турцию, Ирак, Иран, Афганистан, Сирию. Здесь курды составляют значительную часть населения, в частности в тех районах, которые исторически и географически имеют свое название «Курдистан».

Исторические судьбы курдского народа неразрывно связаны с его мужественной многовековой борьбой за свободу и независимость, за сохранение и развитие своей культуры и языка. Вот почему на протяжении ряда последних лет продолжалась, под руководством М. Барзани, поистине героическая борьба курдов Ирака за автономию в пределах Иракского государства.

Иная историческая судьба сложилась у советских курдов, которые сохраняют свои национальные особенности и успешно развивают лучшие стороны своей культуры.